ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4-1

ք. Մասիս «05» մարտի 2025թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Դավիթ Համբարձումյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Նոր Ստրոյ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Կարապետյանի, և <<Արտ Պլաս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 11.02.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի կարիքների համար կապալային աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ժամկետը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը,

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **23 010 000 (քսաներեք միլիոն տասը հազար) ՀՀ դրամ**, որից 3 835 000 (երեք միլիոն ութ հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ **15 540 000 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ**՝ որից 2 590 000 (երկու միլիոն հինգ հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

2-րդ չափաբաժին՝ **7 470 000 (յոթ միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար)** ՀՀ դրամ՝ որից 1 245 000 (մեկ միլիոն երկու հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Ընդ որում, հիմք ընդունելով 11.02.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը՝ կատարված և սահմանված կարգով ընդունված աշխատանքների դիմաց վճարումները կատարվելու են <<Նոր Ստրոյ>> ՍՊ ընկերության՝ սույն պայմանագրում սահմանված հաշվի համարին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի ոչ պատշաճ՝	
1.1	կազմակերպում	0,2%
1.2	կահավորում	0,2%
2	Անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանում	1.0%
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանում	0,2%

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Մասիսի համայնքապետարան	«ՆՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4	ԱՐԱՐԱՏ, ԱՐՏԱՇԱՏ, ՄԱՆՈՒՇՅԱՆ Փ.,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	S 6
Հ/Հ 900 432 330 034	« ԱՄԻՕ բանկ » ՓԲԸ
ՀՎՀՀ 04240324	h/h 1150019081081056,
	ՀՎՀՀ 04252719
	Տնօրեն՝ Գ. Կարապետյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Արտ Պլաս>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի5
« Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163098331594
ՀՎՀՀ 04225743
Տնօրեն՝ Ս. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 05 » մարտի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4-1 ծածկագրով պայմանագրի

Չափաբաժին 1
Ծավալաթերթ-նախահաշիվ

Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրի՝ կամրջից դեպի եկեղեցի տանող ճանապարհատվածում (Մասիսի խճ. հատված) մայթի կառուցում աշխատանքների կատարման

N	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	Ա/բետոնե ծածկի կտրում սղոցով /երթևեկելի մասում 0,3 մ լայն. /, եզրաքարերի տեղադրման համար	մ	787.00	0.470	369.890
2	Ա/բետոնե ծածկի քանդում հիմքի շերտերով h միջ=30սմ հաստությամբ , բարձում ավտոինքնաթափեր 0,65մ3 շերեփի տարողությամբ էքսկավատորով	$մ^3$	71.00	7.130	506.230
3	5.4) IV գրունտի մշակում էքսկավատորով (0.65մ3 շերեփի տարողությամբ), բարձում ավտոինքնաթափեր	$մ^3$	36.63	0.846	30.989
4	Նույնը ձեռքի աշխատանքով	$մ^3$	4.07	5.294	21.547
5	Տեղափոխում լցակույտ 4,0 կմ	տ	223.40	0.380	84.892
6	5.4) IV գրունտի մշակում էքսկավատորով (0.65մ3 շերեփի տարողությամբ), կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար	$մ^3$	43.20	0.846	36.547
7	Աշխատանք լցակույտում	$մ^3$	111.70	0.068	7.596
8	Գոյություն ունեցող բետոնե գլխադիրի վերին հատվածի քանդում, ծածկի սալի տեղադրման համար	$մ^3$	0.21	66.357	13.935
9	Հողային պաստառի հարթեցում ավտոգրեյդերով	$մ^2$	1391.50	0.021	29.222
10	Գրունտի խտացում գլդոնով 25տ քաշով 6 անցումով 1 հետքի վրայով	$մ^3$	139.15	0.343	47.728
	Ընդամենը ըստ I բաժնի				1,148.576
	II. Կառուցման աշխատանքներ				
	Ճանապարհային պատվածք				
1	Ավազակոպճային հիմքի իրականացում 10 սմ հաստ.ԳՕՍՏ 23735-2014	$մ^3$	23.60	9.675	228.330
2	Խճաավազային հիմքի տեղադրում 15սմ հաստությամբ (C6), ԳՕՍՏ 25607-2009	$մ^2$	236.00	1.657	391.052
3	Մանրահատիկ խիտ ա/բետոնե շերտի տեղադրում h=5սմ „Բ"տիպ ԳՕՍՏ 9128-2013	$մ^2$	236.00	5.288	1,247.968
	Մայթեր				
1	Բազալտե եզրաքար 15x30սմ միաձույլ B15 բետոնից հիմք 1գծ.մ 0,035մ3,ավազակոպճային շերտ h=5սմ 1գծ.մ 0,0175մ3	մ	602.50	12.198	7,349.295
2	Բազալտե եզրաքար 15x20սմ միաձույլ B15 բետոնից հիմք 1գծ.մ 0,035մ3,ավազակոպճային շերտ h=5սմ 1գծ.մ 0,0175մ3	մ	184.50	10.121	1,867.325
3	Միաձույլ բետոնե եզրաշարի կառուցում 10x20 (B-20)-586,0 մ	$մ^3$	11.72	58.753	688.585
4	Մայթերի լրացում նախօրոք կուտակված բնահողից հմիջ=5սմ	$մ^3$	43.20	0.081	3.499

5	Գրունտի ջրում	մ³	43.20	0.437	18.878
6	Գրունտի հարթեցում և խտացում	մ³	43.20	0.343	14.818
7	Խճաավազային հիմքի տեղադրում 12սմ հաստությամբ (C6), ԳOUS 25607-2009/մայթ,մուտք/	մ²	1155.50	1.340	1,548.370
8	Մանրահատիկ "Դ" տիպի ավազային ա/բետոնե շերտի տեղադրում h=3սմ հաստությամբ /մայթ/	մ²	871.50	3.405	2,967.458
9	Մանրահատիկ խիտ ա/բետոնե շերտի տեղադրում « Բ » տիպի h= 4սմ ԳOUS 9128-2013 /մուտք/	մ²	284.00	4.399	1,249.316
10	Բետոնե 10x20սմ եզրաշարի ամրացում ավազակոպիճով, հմիջ=20սմ հաստությամբ և 30 սմ լայնությամբ	մ²	175.80	1.849	325.054
	Ընդամենը ըստ II բաժնի				17,899.948
	III. Արհեստական կառուցվածքներ				
	Բետոնե վաքեր և խողովակներ				
1	33.4) III գրունտի մշակում էքսկավատորով (0.65 մ3 շերեփի տարողությամբ), բարձում ավտոինքնաթափեր	մ³	3.447	0.593	2.044
2	Նույնը ձեռքի աշխատանքով	մ³	0.383	3.641	1.395
3	Տեղափոխում լցակույտ 4,0 կմ	տ	6.89	0.380	2.620
4	33.4) III գրունտի մշակում էքսկավատորով (0.65 մ3 շերեփի տարողությամբ), կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար	մ³	1.31	0.593	0.777
5	Ավազակոպճային նախապատրաստական շերտի տեղադրում h=10սմ հաստությամբ	մ³	0.04	11.514	0.461
6	Մետաղական խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով ԳOUS 9.602-2016	մ²	0.82	1.775	1.456
7	Մետաղական d=325x5մմ խողովակի տեղադրում ԳOUS 10704-91	մ	0.80	43.254	34.603
8	Ավազակոպճային շերտի տեղադրում հավաքովի ե/բ 30x34 սմ չափերի վաքերի տակ h=10սմ հաստությամբ	մ³	0.63	11.514	7.254
9	Հավաքովի ե/բ 30x34 սմ չափերի վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ²	11.30	1.304	14.735
10	Հավաքովի ե/բ 30x34 սմ չափսի վաքերի տեղադրում L=3,0 գծմ - 9 գծմ երկարությամբ	մ³	0.72	28.784	20.724
11	Հավաքովի ե/բ 30x34 սմ չափսի վաքեր ԳOUS 32955-2014	հատ	3.00	43.574	130.722
12	Հետադարձ լիցքի իրականացում	մ³	1.31	1.590	2.083
	Դիտահորերի նորոգում				
1	Դիտահորի նոր ե/բ ծածկի սալի տեղադրում 1800x1800մմ չափսերի, թուջե մտոցով և կափարիչով (60x60սմ)	հատ	1.00	355.239	355.239
2	Դիտահորերի պատերի նորոգում և նիշի ուղղում 2 հատ (բետոն B-15 դասի)	մ³	0.30	94.102	28.231
	Ընդամենը ըստ III բաժնի				602.344
	Ընդհանուրը				19,650.868
	ԱԱՀ-20%				3,930.174
	Ընդհանուրը				23,581.042

Չափաբաժին 2

Ծավալաթերթ-նախահաշիվ

Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 14 և 18 շենքերին հարակից (Արարատյատ փողոցի հատված) ճանապարհատվածում մայթի կառուցման աշխատանքների կատարման

N	Աշխատանքների անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը /հազ.դրամ/
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	5.4) IV գրունտի մշակում էքսկավատորով (0.65մ3 շերեփի տարողությամբ), բարձում ավտոինքնաթափեր	մ³	83.07	0.850	70.610
2	Նույնը ձեռքի աշխատանքով	մ³	9.23	5.320	49.104
3	Տեղափոխում լցակույտ 2,0 կմ	տ	184.60	0.280	51.688
4	33.4) III գրունտի մշակում էքսկավատորով (0.65մ3 շերեփի տարողությամբ), բարձում ավտոինքնաթափեր	մ³	44.73	0.669	29.924
5	Նույնը ձեռքի աշխատանքով	մ³	4.97	3.017	14.994
6	Տեղափոխում լցակույտ 2,0 կմ	տ	89.46	0.280	25.049
7	Աշխատանք լցակույտում	մ³	142.00	0.068	9.656
8	Գոյություն ունեցող դիտահորերի ե/բ ծածկի սալերի ապամոնտաժում թուջե մտոցով և կափարիչով, բարձում ավտոինքնաթափեր և տեղափոխում լցակույտ 2,0 կմ	հատ	1.00	4.868	4.868
9	Ա/բետոնե ծածկի կտրում սղոցով /երթևեկելի և մուտքերի հատվածում/	մ	159.00	0.472	75.048
10	Հողային պաստառի հարթեցում ավտոգրեյդերով	մ²	523.00	0.021	10.983
11	Գրունտի խտացում գլդոնով 25տ քաշով 6 անցումով 1 հետքի վրայով	մ³	52.30	0.345	18.044
	Ընդամենը ըստ I բաժնի				359.968
	II. Կառուցման աշխատանքներ				
	Ճանապարհային պատվածք				
1	Ավազակոպճային հիմքի իրականացում 10 սմ հաստ. ԳOUS 23735-2014	մ³	33.00	9.722	320.826
2	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, h=15սմ հաստությամբ ԳOUS 33133-2014	մ²	330.00	1.842	607.860
3	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	1.36	273.123	371.338
4	Մանրահատիկ խիտ ա/բետոնե շերտի տեղադրում h=5սմ „Բ"տիպ ԳOUS 9128-2013	մ²	330.00	5.314	1,753.620
	Մայթեր				
1	Բազալտե եզրաքար 15x30սմ միաձույլ B15 բետոնից հիմք 1գծ.մ 0,035մ3,ավազակոպճային շերտ h=5սմ 1գծ.մ 0,0175մ3	մ	135.00	12.258	1,654.830
2	Բազալտե եզրաքար 10x20սմ միաձույլ B15 բետոնից հիմք 1գծ.մ 0,050մ3,ավազակոպճային շերտ h=5սմ 1գծ.մ 0,015 մ3	մ	127.00	10.217	1,297.559
3	Խճաավազային հիմքի իրականացում (C6), h=8սմ հաստությամբ	մ²	193.00	1.249	241.057
4	Չոր ցեմենտ-ավազային խառնուրդից շերտի պատրաստում h=7սմ հաստությամբ / 1:9 հարաբերությամբ/ , բետոնե սալիկների տակ	մ³	13.51	17.989	243.031

5	Բետոնե ձևավոր, 2-րդ շերտը մոխրագույն սալիկների տեղադրում h=6սմ հաստությամբ «Հին քաղաք» տեսակի ԳՕՍ 26633-2015 (Սալիկների տեսքը և տեղադրման ձևը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)	մ²	134.00	7.858	1,052.972
6	Բետոնե ձևավոր, 2-րդ շերտը գունավոր սալիկների տեղադրում h=6սմ հաստությամբ «Հին քաղաք» տեսակի ԳՕՍ 26633-2015 (Սալիկների տեսքը և տեղադրման ձևը համաձայնեցնել Պատվիրատուի հետ)	մ²	59.00	8.503	501.677
	Ընդամենը ըստ II բաժնի				8,044.770
	III. Դիտահորերի նորոգում				
1	Դիտահորի նոր ե/բ ծածկի սալի տեղադրում 1200x1200մմ չափսերի, թուջե մտոցով և կափարիչով	հատ	2.00	240.628	481.256
2	Դիտահորերի պատերի նորոգում և նիշի ուղղում 3 հատ (բետոն B-15 դասի)	մ³	0.45	94.564	42.554
	Ընդամենը ըստ III բաժնի				523.810
	Ընդհանուրը				8,928.548
	ԱԱՀ-20%				1,785.710
	Ընդհանուրը				10,714.258

Մասնակիցը պետք է ունենա սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն (<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիցենզիաներ և ներդիրներ), ինչպես նաև պետք է բավարարի նախագծով աշխատանքային ռեսուրսների և մեքենա-մեխանիզմների համար սահմանված նվազագույն պահանջներին, եթե այդպիսիք նախատեսված են նախագծերով.

Չափաբաժիններ 1-ին և 2-րդ - ներդիրներ՝ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (03.04) և տրանսպորտային ուղիներ (ավտոմոբիլային ճանապարհներ, երկաթուղային գծեր և օդանավակայաններ, արհեստական կառուցվածքներ՝ կամուրջներ, թունելներ, ուղեանցներ, էստակադաներ, հենապատեր և այլն) (03.09):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 330 034
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«ՆՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
ԱՐԱՐԱՏ, ԱՐՏԱՇԱՏ, ՄԱՆՈՒՇՅԱՆ Փ., Տ 6
« ԱՄԻՕ բանկ » ՓԲԸ
h/h 1150019081081056,
ՀՎՀՀ 04252719
Տնօրեն Ա. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Արտ Պլաս>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի5
« Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163098331594
ՀՎՀՀ 04225743
Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 05 » մարտի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4-1 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
կապալային աշխատանքների կատարման

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրի՝ կամրջից դեպի եկեղեցի տանող ճանապարհատվածում (Մասիսի խճ. հատված) մայթի կառուցում աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 90 օրացուցային օր
2	Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 14 և 18 շենքերին հարակից (Արարատյատ փողոցի հատված) ճանապարհատվածում մայթի կառուցման աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 60 օրացուցային օր

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 330 034
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՆՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
ԱՐԱՐԱՏ, ԱՐՏԱՇԱՏ, ՄԱՆՈՒՇՅԱՆ Փ., Տ 6
« ԱՄԻՕ բանկ » ՓԲԸ
հ/հ 1150019081081056,
ՀՎՀՀ 04252719
Տնօրեն՝ Վ. Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Արտ Պլաս>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի5
« Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163098331594
ՀՎՀՀ 04225743
Տնօրեն՝ Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 05 » մարտի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142	Մասիս համայնքի Մարմարաշեն բնակավայրի՝ կամրջից դեպի եկեղեցի տանող ճանապարհատվածում (Մասիսի խճ. հատված) մայթի կառուցում աշխատանքներ			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	45221142	Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 14 և 18 շենքերին հարակից (Արարատյան փողոցի հատված) ճանապարհատվածում մայթի կառուցման աշխատանքներ			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 330 034
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«ՆՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
ԱՐԱՐԱՏ, ԱՐՏԱՇԱՏ, ՄԱՆՈՒՇՅԱՆ Փ., Տ 6
« ԱՄԻՕ բանկ » ՓԲԸ
h/h 1150019081081056,
ՀՎՀՀ 04252719
Տնօրեն Գ.Կարապետյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Արտ Պլաս>> ՍՊԸ
Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի5
« Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 163098331594
ՀՎՀՀ 04225743
Տնօրեն Ա. Սարգսյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5
« 05» մարտի 2025թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4-1 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԱՍՏՈՒՄ
իրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

<<Նոր Ստրոյ>> ՍՊԸ-ն և <<Արտ Պլաս>> ՍՊԸ-ն հավաստում են, որ ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-25/4-1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում պարտավորվում են տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

ԿԱՊԱԼԱՌՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Արտ Պլաս>> ՍՊԸ	«ՆՈՐ ՍՏՐՈՅ» ՍՊԸ
Արարատի մարզ գ. Շահումյան Արցախի5 «	ԱՐԱՐԱՏ, ԱՐՏԱՇԱՏ, ՄԱՆՈՒՇՅԱՆ Փ., Տ 6
Հայէկոնոմբանկ ԲԲԸ	« ԱՄԻՕ բանկ » ՓԲԸ
Հ/Հ 163098331594	h/h 1150019081081056,
ՀՎՀՀ 04225743	ՀՎՀՀ 04252719
Տնօրեն՝ Ա. Սարգսյան	Տնօրեն՝ Վ. Կարապետյան
------------------------------------ /ստորագրություն/ Կ.Տ.	------------------------------------ ստորագրություն Կ.Տ